ՆՈՒԽՈՒՅ մեզ գրում են. «Ցեղիս հոգևոր կառավարությունը բաղկացած է դարձեալ իր անշարժ և անփոփոխ անդամներից, որոնք միշտ եղել են, և կը լինեն տէր Սիմէօնը, Տէր Մովսէսը և նրանց քարտուղար Կարապետը. Երեքն էլ մի ժամանակ չքաւոր էին, իսկ այժմ գեղեցիկ տներ ու հողեր ունեն և առևտրական գործեր են վարում. Այժմ յաջորդի բացակայութեան պատճառով ամբողջ հոգևոր կառավարությունը այդ երեք հերոսների ձեռքումն է. Հասկանալի է թէ ուր կը հասցնեն նրանք ժողովուրդը, արդարացնելով նշանաւոր առածը թէ՝ աշխարհը դմակ է, մարդը դանակ. կտրէ ու կտրէ.»

—

Հետևեալ լուրը հաղորդում են մեզ ԲԱԳՈՒԻՑ. Այս օրերումս Բագուի հաշտարար դատարանում քննվեցաւ մի վարժուհու դանգատ Մարդասիրական ընկերութեան երկսեռ դպրոցների վարչութեան դէմ. Օրիորդ Վարձելեան, ընկերութեան երկսեռ դպրոցների վարժուհին, խօսք էր տուած տեսչին մնալ իր պաշտօնի մէջ միայն մինչև յուլիս ամսի 1-ը. Բայց երբ պայմանաժամը հասաւ և օրիորդին յիշեցրին իր խոստումը, այն ժամանակ նա պահանջեց և ամառվայ արձակուրդ ամիսների համար 150 ռուբլ ռոճիկը. Դպրոցի վարչութիւնը հրաժարվեց տալ այդ փողը, որ պայմանից դուրս էր. Այն ժամանակ օրիորդը դանդատվեց հաշտարար դատաւորին, որ և վճռեց գործը յօգուտ օրիորդի, բացի 150 ռուբլից, 10 ռուբլ էլ դնելով դպրոցի վարչութեան վրա, որպէս դատաստանական գործի ծախս.

—

Մեզ պատմում են որ պ. Սեդրակ Մանդինեանը ուղևորվել է յուլիսի 22-ին Էջմիածին, անձամբ խօսելու Գէորգեան ճեմարանում ուսուցչի պաշտօնը ընդունելու պայմանների մասին.

—

Յուլիսի 20-ին ԹԻՖԼԻՍԻ Ներսիսեան դպրոցում եղաւ ընդհանուր ուսուցչական ժողովի նախապատրաստական նիստը. Թեմական դպրոցների վերատեսուչ պ. Բարխուդարեան հաշիւ ներկայացրեց թեմիս դպրոցների ամբողջ տարվայ գործունէութեան և առանձին շնորհակալութիւն յայտնեց թէ ծխական ուսումնարանների և թէ միջնակարգ դպրոցների ծրագիր կազմող անձանց. Ընտրվեցան ընդհանուր ժողովի կողմից նոր մասնաժողովի անդամներ. Մօտ 30 ուսուցիչներից, որոնք ներկայ էին ժողովին, մի քանի անհատներն էին միայն մասնակցում մանկավարժական վիճաբանութիւններին, իսկ մեծամասնութիւնը լուռ էր նիստի ամբողջ տևողութեան ժամանակ.

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են որ վերջին անձրևներից Քիշչայ գետը յորդանալով բաւական վնաս է տուել չրջակայ արտերին, իսկ Դէյբուլաղի և Դաշբուլաղի կողմերում հեղեղը բաւական շատ հունձ է քշել տարել.

—

Մեզ գրում են ԳԷՏԲՈՒԼԱՂԻՑ (Նուխու գաւառում). «Պ. Սարգիս Բաբայեանցի երէցփոխանութեան օրով մեր եկեղեցին 60 ռուբլ զուտ արդիւնք է ունեցել, իսկ նրանից յետոյ մեր երէցփոխաններից ոչ մինը եօթ տարվայ ընթացքում մի կոպէկ արդիւնք չէ տուել. Ո՞ւր են գնում եկեղեցու արդիւնքները.»

—

Լսում ենք որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը պարտաւորացրել է գանձապահի պաշտօնից հրաժարեցրած տէր Ղևոնդ քահանայ Խարազեանցին մասամբ իր ծառայութեամբ որպէս տնտես և ուսուցիչ, մասամբ նաղդ փողով փոքր առ փոքր լրացնել դպրոցի գանձից յանկարծակի պակասած 3000 ռուբլ. Իսկ երբ որ (յայտնի չէ դեռ ևս երբ) կորած գումարը լրացած կը լինի, հոգաբարձութիւնը մի հերքում կը գրի և պաշտօնապէս տպել կը տայ մեր լրագիրներում, թէ «Մշակի» յայտնած լուրը 3000 ռուբլ դպրոցի գանձից կորչելու մասին սուտ էր և զրպարտութիւն էր Խարազեանց քահանայի դէմ, որ հեռացրած է իր պաշտօնից ժամանակի պակասութեան պատճառով. Վերջապէս որպէս ապացոյց մեր կողմից արած զրպարտութեան Խարազեանցի դէմ, հոգաբարձութիւնը տէր Ղևոնդին գանձապահութենից հեռացնելուց յետոյ, աշխատում է բերել աալ նրա համար խաչ և կամիլավկա էջմիածնից. Չը լինի թէ կորած 3000 ռուբլը էջմիածին են գնացել. այն ժամանակ մենք հաւատում ենք որ յարգելի քահանան շատ շուտով կը ստանայ ոչ թէ միայն մի խաչ և մի կամիլավկա, այլ գուցէ երեք խաչ և երեք կամիլավկա. Որքան մեզ յայտնի է մի խաչի և մի կամիլավկայի մաղանդան 1000 ռուբլ է.

—

Մեզ գրում են ԱԽԱԼՑԽԱՑԻՑ. «Մեր դպրոցների մէջ կարել և ձևել սովորեցնող պ. Անեանց ամբողջ տարի շատ լաւ է աշխատել. Ախալցխացիները շատ շնորհակալ են նրանից. Մինչ նրանք, որոնք զանազան ինտրիգաներ են լարում պ. Անեանցի դէմ չը պէտք է կարմրեն, որ փոխանակ պաշտպանելու նրան, աշխատում են վնասել նրան ամեն միջոցներով.»

—

ՆՈՒԽՈՒ վիճակում, ինչպէս մեզ գրում են, 70 հատ հայաբնակ գիւղերից միայն մէկը ուսումնարան ունի. Մնացածների մանուկները դէպի ուսում սէր ունենալով գնում են Թուրք մէչիդները մօլլաների մօտ գոնէ թուրքերէնը սովորելու. Ոչ թեմական տեսուչ պ. Տէր-Գրիգորեան, ոչ էլ հոգևոր իշխանութիւնը հոգ են տանում, որ հայ գիւղերում դպրոցներ բաց անեն.

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. «Բաղաքը օրից օր ընկնելու վրա է և կը գայ ժամանակ երբ դա բոլորովին մի հասարակ գիւղի կը նմանվի. Տաս տարի առաջ նրա մետաքսը ամբողջ աշխարհում տարածվում էր, իւրաքանչիւր գարնան աւելի քան հարիւր, երկու հարիւր ֆրանսիացի գալիս էին այստեղ մետաքսի բօժոյների հաղարաւոր հակեր կապելով և Ֆրանսիա ուղարկելով. Նոյնպէս առնում էին հաղարաւոր պուդ ընկուզի կոճղ մերձակայ գիւղերից և նոյնպէս Ֆրանսիա ուղարկում. Նուխում կազմված էին առևտրական ընկերութիւններ, որոնք միլիոնաւոր գործեր էին կատարում, մի և նոյն ժամանակ աւելի քան 500 մետաքսի գործարաններ էին բանում այդտեղ. Այդ բոլորից էլ ոչ մինը չը կայ այժմ. Փոխադարձ թշնամութիւն, նախանձ, ատելութիւն, միմանց վնասելը այնտեղ են հասցրել մեզ, որ այժմ ամենքս էլ յետին աղքատութեան մէջն ենք. Նախկին վաճառականական ընկերութիւնների հոգսերով կառուցված ահագին քարվանսարաները այժմ ամայի են մնացած և օրից օր աւելի քանդվում են. Բազմաթիւ գործարանների մեքենաները ժանգոտվել, կոտրվել, փչացել են. Մնացել է միայն Միրզօեվի (նախկին Ալէկսէեվի) գործարանը, ուր մի ժամանակ մօտ երկու հազար բանող կար, իսկ այժմ հազիւ 120 մարդ են բանում. Այս բոլոր դժբաղդութիւններից յետոյ նուխեցիները չը խրատվելով միմանց տունն են այրում, միմանց սպանում են, իրար դէմ թշնամութիւն անում. Նիւթապէս բոլորովին ըսպառվելով և քանդվելով, այժմ Նուխին բարոյական ու մտաւոր անկմանն էլ մօտենում է. Մեր միակ ազգային հիմնարկութիւնը, ուսումնարանը, միանգամայն թշուառ դրութեան մէջ է գտնվում, շնորհով անընդունակ և չտաղտէր հոգևորականների, անտարբեր հոգաբարձուների և անպէտք վարժապետների.»

—

Հայաբնակ քաղաքների հայ քահանաները բոլորն էլ հարկատու ստրուկներ են դարձել Մանկունու ձեռքում. Չէնց որ Մանկունին իմանում է որ այս կամ այն քաղաքի քահանան լաւ ծուխ ունի կամ կարծում է թէ փող ունի, իսկոյն պահանջում է նրանից ընծաներ. Մենք ունենք մեր ձեռքում նրա և ուրիշ եպիսկոպոսների ստորագրութեամբ իսկական նամակներ, որոնք մեզ զանազան տեղերից ուղարկվեցան. Մէկի մէջ պահանջվում է այս ինչ քահանայից ժամաշապիկների համար փող ուղարկել, կամ գնել 100—200 արշին ընտիր մետաքս (որ հաշվելով արշինը 7 ռուբլ, կանի 1400 ռուբլ), մի ուրիշ նամակով այն ինչ քահանայից մեծ գումար է պահանջվում էջմիածնի տպարանի համար արագատիպ մեքենայ բերել տալու համար և այլն և այլն. Այսպիսով Մանկունին և նրան ստորադրեալ եպիսկոպոսները պահանջում են քահանաներից մետաքս, բրդեայ կերպասներ, թուղթ, տպարանի մուր, արագատիպ մեքենայ, նաղդ փող—վերջապէս ինչ կը պատահի, արդարացնելով այն արածը թէ «ընծայած ձիու ատամներին չեն նայի.» Բայց հաստատապէս պատմում են մեզ որ այդ բոլոր ընծաներն էլ էջմիածնում չեն նշանակվում նուիրատուութիւնների ցուցակում, այլ Մանկունին անց է կացնում նրանց վանքի գումարների ծախսերի մասեանում. Իսկ եթէ քահանաներից մինը համարձակվի չը կատարել այդ հրամանները,—իսկոյն կը գտնեն որ նա կամ չըհաս պսակ է կատարել, կամ մի այլ յանցանքի մէջ կը մեղադրեն նրան և կը զրկեն նրան կամ աւագ-քահանայութենից, կամ պատարագ անելու և տները օրհնելու իրաւունքից, կամ քահանայական մի այլ եկամուտից, այսպիսով աղքատացնելով նրան, մինչև չը զղջայ, այսինքն մինչև որ չուզարկի պահանջած գումարը կամ պատուիրած առարկան.

—

Շնորհակալութեամբ ստացանք «Երկու մանրավէպ» Ալֆոնս Դոդէի, գրքոյկը, թարգմանութիւն Նիկողայոս Տէր-Աւետիքեանի, հրատարակութիւն Տիգրան Նազարեանի. Գրքոյկը տպված է Շուշում, Մ. Մահտեսի Յակոբեանի տպարանում, ներկայ 1881 թվին և բաղկացած է երկու փոքրիկ վէպերից՝ «Լրտես տղան» և «Մելիւզինի ընծան.»

—

Մեր աշխատակից պ. Բաֆֆին այս օրերս ճանապարհ ընկաւ դէպի Ղարաբաղ, երկրի դիրքերը ուսումնասիրելու համար, իր «Դաւիթ բէկ» romանը վերջացնելու նպատակով.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Գամբետտայի նոր լրագիր „Paris“ առաջարկում է եռանդոտ միջոցներ գործ դնել Փարիզ եկող գերմանացիների դէմ, որոնք, ցոյց տալով, թէ ծառայում են զանազան գրասենեակների և հիմնարկութիւնների մէջ, իսկապէս լրտեսութիւն են անում գերմանական կառավարութեան համար. Փարիզի մէջ գոյութիւն ունեցող գերմանական ընկերութիւնը մի շրջաբերական ուղարկեց Ֆրանսիական նշանաւոր առևտրական տներին, որով առաջարկում է իր միջնորդութիւնը գերմանացի էժան բանւորներ գտնելու համար գրասենեակների և առևտրական պարապմունքների համար. Այդ շրջաբերականը, լրագրի կարծիքով, արդէն ապացուցանում է, թէ Փարիզի մէջ մի այնպիսի գերմանական կազմակերպութիւն կայ, որ ձգտում է ոչ թէ միայն մասնաւոր, այլ և քաղաքական նպատակների հասնել. Գերմանացի բանւորները աջողութեամբ կարող են մրցել Ֆրանսիացիների հետ, որովհետև առաջինները գերմանական կառավարութենից վարձատրութիւն ստանալով, կարող են այնպիսի պայմաններով ծառայել, որոնց չեն ընդունի ազնիւ աշխատանքով ապրել ցանկացող Ֆրանսիացիները. „Paris“ լրագրի կարծիքով Փարիզի մէջ չափազանց շատ գերմանացիներ կան և անհրաժեշտ է նրանց վրա խստութեամբ հսկել քաղաքական լրտեսութեան առաջն առնելու համար. „Paris“ լրագրի այդ յօդուածը ծանր տպաւորութիւն գործեց գլխաւորապէս այն պատճառով, որ ամենքին յայտնի է նրա խմբագրութեան յարաբերութիւնները Գամբետտայի հետ.

Ներքին գործերի մինիստր Կոնստան մի շրջաբերական ուղարկեց պրեֆեկտներին և և առհասարակ վարչական բոլոր անձանց, հրաւիրելով նրանց չը միջամտել պատգամաւորների ապագայ ընտրութիւններին և չեզոք մնալ. Ով որ անհնազանդ կը գտնվի և չի կատարի այդ հրամանը, նա անյապաղ ծառայութենից կարձակվի.

Տունիսից ստացված տեղեկութիւններից երևում է, որ Գաբեսի բնակիչները թոյլ չեն տալիս հրէաներին հեռանալ քաղաքից, որպէս զի այդպիսով քաղաքի ամրակոծութեան առաջն առնեն. Սֆակսի մէջ բնակիչները մի քանի օր շարունակ թաղնված էին իրանց տների աւերակների մօտ և այնտեղից հրացաններ էին արձակում ֆրանսիացիների վրա. Սֆակսը վերցնելու ժամանակ արաբները աւելի լաւ էին համարում մեռնել, քան թէ գերի ընկնել. Կայրոյից հաղորդում են, որ արաբների մի ցեղ զինուորված սպասում է Ֆրանսիացիներին. Ասում են, որ այդ կողմերի ապստամբների թիւը 20,000 է հասնում. Կայրոյի շուրջը կենտրոնացել են մի քանի հազար լաւ զինուորված արաբներ, որոնք մասամբ համոզում են և մասամբ ստիպում են բնակիչներին ընդդիմադրել Ֆրանսիացիներին.

Կ. Պոլսից ստացված մասնաւոր տեղեկութիւնները Ֆրանսիայի և Բ. Դրան յարաբերութիւնների մասին կատարելապէս հակասում են լրագրական լուրերին. Դիպլոմատիական շրջանները նոյնպէս հաւատացնում են, որ այդ յարաբերութիւնները բարեկամական են. Բ. Դուռը ամենաբաւականացուցիչ մեկնութիւններ տուեց Տրիպոլի թիւրքաց զօրքեր ուղարկելու մասին, հաւատացնելով, որ նա ոչինչ թշնամութիւն չունի դէպի Ֆրանսիան և որ բոլորովին մասնակից չէ Տունիսի և Ալժիրիայի ապստամբութիւններին.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 յուլիսի. „Правит. Вѣст.“ լրագրի մէջ տպված է հետևեալ հեռագիրը Կօսարօմայից յուլիսի 22-ից. Այսօր թագաւորը և թագուհին, որի անուանակոչութեան օրն էր, ժառանգի և Մեծ Իշխանների հետ աղօթում էին այնտեղ, որտեղ պատանի Միխայիլ Ֆէօդորովիչ ընդունեց ռուսաց երկրի դեսպաններին, որոնք յայտնեցին Աստուծոյ այն կամքը, թէ ժողովրդեան քուէարկութեամբ թագաւորութիւնը յանձնվեցաւ Բոմանովների տանը.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յուլիսի. Պաշտօնապէս հաղորդում են. Ներքին գործերի մինիստրի կարգադրութեան համեմատ „Голосъ“ լրագիրը ստացաւ երրորդ նախազգուշութիւն և դադարեցրած է վեց ամսով.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յուլիսի. „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ տպված է Բարձրագոյն հրովարտակ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչի անունով, որով թագաւոր կայսրը յայտնում է Մեծ Իշխանին իր հոգեկան շնորհակալութիւնը բազմատարի աշխատանքների և լուսաւոր գործունէութեան համար Կովկասի մէջ և նշանակում է նորին Բարձրութեանը Պետական խորհրդի նախագահ.

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յուլիսի. Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 62 կ., երրորդ 94 ր. 75½ կ., չորրորդ 94 ր. 25½ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 225 ր., երկրորդ 224 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր. 75 կ., երկրորդ 91 ր. 75½ կ., երրորդ 91 ր. 87 կ., ոսկի 7 ր. 75½ կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,71 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 219 մարկ, 50 պֆ., Փարիզի վրա արժէ 270 ֆրանկ 25 սանտիմ. Բօրսայի տրամադրութիւնը ամուր է.

„ՄՇԱԿԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՄԱՆԴԼԻՍ. Յ. Լ. Ստացանք ձեր նամակը 8 հատ եօթ կոպէկանոց մարկաներով, որի մէջ դուք գրում էք. «Աւելորդ 7 կոպէկը կարող էք «Մշակում» ինձ տուած խորհուրդի հաշուում ընդունել.» Մենք ձեզ կը դարձնենք 7 կոպէկ, որովհետև խորհրդի համար փող չենք ընդունում և դարձեալ պատրաստ ենք մի խորհուրդ տալ ձեզ, կրկին ձրի. շատ բան սովորեցիք, այժմ քիչ քաղաքավարութիւն էլ սովորեցէք.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ